ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 058/2016-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20.07.2016թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2016թ. ուսուցման ծրագիրը (հիմք՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 16.03.2016թ. թիվ 15/770-16 գրությունը) և ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անցկացման կարգը (հիմք՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 29.06.2015թ. թիվ 15/29-3-15 գրությունը), ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալի 09.06.2016թ. թիվ 15/15/1920-16 գրությունը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2016թ. ուսումնական տարվա քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2-րդ խմբի բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2016թ. ուսումնական տարվա քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:

Ռեկտոր՝ **Ս. Առաքելյան**